

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ.

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. 2

Ա. Գիրք. եր. 10.

Հետեւեալ յիշատակարանը, արտադրուած չ. ն. Ակինեանի ձեռքով Երեւանի Թանգ. Թիւ 82 աւետարանից, Հոռովկայում Յովաննէս Սարկաւագ գրչի ձեռքով, ճիշդ գաղափար է տալիս ոչ միայն Վրաց, այլ նաեւ հարեւան պետութիւններէ սահմաններէ մասին.

«Ի վեցհարիւրերորդի վաթսներորդի երրորդի շրջագայութեամբ Հայոց ի հայրապետութեան Եւ Յովաննիսի կորովամիտ եւ խոհեմ առաջնորդի: Եւ ի Թագաւորութեն. Լեւոնի որդւոյ Ստեփանէի: Եւ ի սուրտանութեան. Մէլիքըլեաներն, որ տիրէր Եգիպտոսի եւ սրտեղեաց Եմի. եւ Դամասկոսի եւ Եգեսեայ, եւ Մոփաց երկրին, Ղլաթա մինչեւ ի սինաւոն Վրաց: * Եւ ի Թագաւորութեն. Վրաց Լաչո, որ տիրէր Տփիսաց (s!) եւ Անուոյ եւ այլ բազում քաղաքաց առաջին տանուտէրացն Հայոց. Ալանաց եւ Աղաւնից (s!), ի Կարնոյ մինչեւ ի Պարս: ** Եւ բռնակալութեն. որդւոյ Պաւստով շահին, որ տիրէր երկրին Հոռոմոց, Կեսարիոյ, Սեբաստոյ (s!) եւ Կանին, եւ այլ բզմ մայրաքաղաք (s!) եւ Սինոպլին, մինչեւ ի ծովն լիբէացոց: *** Եւ ի Թագաւորութեն Հոռոմոց Լաչարո, որ տիրէր ծովեզերացն ովկիանոսի. ի Սինոպլէն մինչեւ ի Թագաւորել քաղաքն Կոստանդինուպուղիս. եւ սմա տիրէ ազգն Փռանդաց խլել ի Հոռոմէն: Եւ ի Թագաւորութեն. Ասորոց Եհաննասի որ է ի Հնդիկս:

*Մէլիքըլեաներ Մելիք-էլ-Ադիլն է (Մէլք-ադ-դիլն Ադիլ) Սալադինի եղբայրը (1193-1218), որ բացի Հալեպից իշխում էր Եգիպտոսի, Ասորիքի եւ Հայաստանի մի մասի (հյւսիս-արեւմտեան) վրայ, 1207 թուին վերջ տալով Սելճուկեան Շահի արմէնների պետութեանը:

**Գէորգի Լաչայի պետութեան սահմանները համապատասխան են Գանձակեցու տուած ցուցումներին, միայն այստեղ չէ յիշուած Երզնկան, որ Կարնոյ Սուլթանութեան մասն էր: Կարնոյ Սուլթանութիւնը շատ կարճ ժամանակ միայն հարկատու եղաւ Գէորգի Լաչային:

***Խոսքով շահի կամ Քայ-խոսքովի որդին, Քայ-Քաւուն առաջինն էր (1210-1219), որ յիրաւի Միջերկրականի Ադալիա քաղաքից իշխում էր մինչեւ Սինոպ. վերջինս յափշտակել էր բիւզանդական Ալէքսանդր Ա. կայսրից:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. 3.

Ա. Գիրք եր. 29.

ՎԱՆԵՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(Նուխուայ Գեոքրուայ գիւղում)

347ա. Միամուխ խորոցն Այ Պաւղոս առաքեալ յիւրումն աշխարհալուր տուածարի գրէ այսպէս. Ոչ ոք ասէ տր զՅս Քս, եթէ ոչ հոգւովն Այ. արդ այս հոգի խաղայ յորդահեղ շնչամբ ի գունդս աւետարանչացն սրբոց, որք երկուցն գեր...ութ...սին... զառաքելականն եւ զաւետարանականն, որք համաքանդակ քառակի գետոցն ոռոգողացն զբարխտ ծաւալեալ յոգիս հաւատացելոց արբուցին զպատշտմն քառանիւթեա միացելոցս ըստ քառադէմ պահպանութեան ի վեր եւ ի վայր յաջ եւ յահեակ եւ կամ ըստ քառադիծ անուան երրորդութեանն առ ըստ մարդն եւ կամ յԱղամ... անդեալ երկու եւ գիծ քառ, որեւ զամենայն իսկ յինքեանս բերեալ զգաղափար ըստ շրջանի տարւոյն,

347բ. եւ ըստ յեղանակաց երկրի. հայել յարեւելս եւ ի մուտս ի հիւսիսի (!) եւ ի հարաւ, եւ ըստ սանդխոցն, որ հասանէր եւ հանէր յերկինս, սկսեալ ոմն ի մարդանայն Այ եւ ոմն յԱծութեանն անդ. իսկ որք ի միջին, իբր մասամբ մի առ մի հանեալ ի վեր անդր տարան զհաւատացեալ ոգիս յամենասուրբ Երրորդութիւնն. ըստ տն. ձայնի. ուր եսն եմ, անդ եւ պաշտուանեայն իմ եղիցի.

Արդ այսմ լուսալիբ իրի եւ գոյութե անխաւսութեան նշանաց եւ... (մի բառ) եւ շահից հոգեւոր տնաւորէնութեան բանին Այ շրջելոցն ըստ մեզ. ըստ կարի եւ յաւթարութեան խնդրող եղեալ Քսասէր եւ բարեպաշտ ոմն անուն Վանենի գուստր բարեպաշտ իշխանին Ջաջոյ որդւոյ Պախրակայ././

348ա. Թոռն Բակ իշխանին. իսկ յայնմ ժամանակի յորժամ ի պարտութիւն մատնեցաւ սուրբն Վարդան զաւրաւք իւրովք վասն ծովացեալ մեղաց մերոց, այս Բակ իշխան զնաց փախստեայ ի յամրոց ոմն եւ զաւրք Պարսից եւ ուրացեալն Վասակ զհետ մտեալ, պատեցին շուրջ զամրոցաւն. իսկ այս Բակ իշխան ելեալ ի պարիսպն նախատեաց զուրացեալն Վասակ եւ զամենայն չարիսն, զոր անցուցեալ էր նա ընդ աշխարհս հայոց, յիջեցուցանէր առաջի զաւրաւարին Պարսից եւ ելեալ ի գիշերի եւթն հարիւր արամբ, զնաց փախստեայ յերեսաց Շապհոյ արքային Պարսից յամուրսն Արցախայ եւ կեցեալ բարեպաշտութեամբ եւ քասական հաւատով մինչեւ յայս բարեպաշտ իշխանս Ջաջուռ եւ ի սմին որդիացեալս/

348բ. Քսասէրս. Վանենի որ եւ ստացաւ զայս Ածախաւս աւետարանս յիշատակ եւ փրկութիւն հոգւոյ